

ՊԱՏՄԻՉԸ՝ ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻՆ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻՆ

Պարտաւոր եմ իմ վերնագիրին յանդգնութիւնն ու յաւակնութիւնը մեղմել Գ. Յովսէփեանին իսկ բառերովը որոնք զմայլելի պարկեշտութեամբ մը, գիտակցութեամբ մը կը մնան աւելի ասդին քան համադրութեանց արտօնած արծակութիւնները:

Սոսեցայ խաղբակեանէն, հոն մուտք ունեցող իրաւ մատենագիրներուն առիթով: Ու հազիւ թելադրեցի թէ այդ մեծածաւալ գործին տիրական նկարագիրը կերպրեցաւ արուեստի յիշատակարաններուն մեզի մատուցումովն էր պայմանաւոր: Գիտենք որ մանրակարգութեան անտիպ աշխատասիրութիւնը նոյն ոգիով մատուցումներու հանդէս մըն է: Կարգացէք Նիւրքեր եւ ու-

սումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան ընդհանուր վերնագրին տակ լոյս տեսած գործերը:

Ով որ այցելած է Վեհափառին ու կախած յոգնած նայուածք մը անոր դարաններուն հասակին, որոնց իւրաքանչիւր խորշին — աչքին — մէջ այս անունները մատուցող նախանիւթերը, մեծ պահարաններու մէջ կը քնանան, սպասելով յարութեան կոչին, ալ չի կրնար մոռնալ զանծին հարցատուեան չափով, հաւաքողին անհուն աշխատանքը:

... «Կը յաջողուի՞ մեզ ամբողջական դարձնել գործը, Աստուծոյ կամքն է, մեր կեանքի տեւողութեան եւ գիտական աշխատանքներով զբաղուելու յարմարութիւն-

դաժառութիւն ստեղծեց հանդէպ հայրենիքին եւ Ս. Էջմիածնին: 1938-ին, Հիւս. Ամերիկայի առաջնորդ ընտրուեցաւ, ուր, մօտ 5 տարիներ պաշտօնավարեց:

10 Մայիս 1943-ին, Անթիլիաս գումարուած Պատգամաւորական Ժողովը գրեթէ միաձայնութեամբ զինքը Կիրիկիոյ Կաթողիկոս ընտրեց, իբրեւ արժանաւոր յաջորդ եւ գահակալ Շնորհալիներու աստանդական Աթոռին: Իրապէս ինք եղաւ ազգընտիր, արժանընտիր եւ արժանավայել Կաթողիկոս մը: Իր ընտրութենէն 1945-1952 ըման եօթը տարիներ գահակալեց, իսկ վերջին մէկուկէս տարին անկողին ինկաւ, իբրեւ հիւանդ:

Հոգելոյս Հայրապետին թաղումը եղաւ համազգային, եւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը 5 անձերէ բաղկացեալ պատուիրակութիւն մը նշանակեց թաղման հանգիստութեանց ներկայ գտնուելու համար:

Իրեն համար, իբրեւ արուեստագէտ եւ մշակուած միտք, գրչագիրները, ուր ցուցած եւ հայելիացած կը մնան հայ ստեղծագործ հանճարին գանձերը, մեր պատմութիւնը եւ արուեստի նուաճումները, ներկրական եւ թանկարժէք սրբութիւններ էին: Իր կողմէն աշխատասիրուած բոլոր

գործերը կոթողական գործեր եղան, մին միւսէն գեղեցիկ, մին միւսէն հմտալից եւ թանկարժէք:

Իրական մեծութիւն մը, հանճարափայլ անձնաւորութիւն մը իր ամբողջ ունեցածը Հայ ազգին եւ Հայ եկեղեցիին տալով մեզմէ կը մեկնի, կոթողական յիշատակներ ձգելով մեզի:

Պատմական, բանասիրական իր գործերը, ի մասնաւորի մեր բազմահազար զբրջագիրները, որոնց մեծ մասը իր կողմէն հանգամանօրէն եւ գիտնականօրէն քննուած եւ ուսումնասիրուած են, փոքր մասով միայն հրատարակուած են: Հոգելոյս Հայրապետը, թանկարժէք ժառանգութիւն մը եւ կտակ մը կը թողու Հայ ազգին, Հայոց եկեղեցիին եւ ի մասնաւորի Մեծի Տանն Կիրիկիոյ Միաբանութեան, որպէսզի՝ անոնք մաս առ մաս տպագրուին եւ հրատարակուին, ասով միայն իր երազը կ'իրականանայ եւ Հոգելոյս ու մեծ Հայրապետին հոգին կը հրճուի երկնային ու յաւիտեական օթեւանէն:

Սուրբ ու արցունք իր անթառամ յիշատակին եւ անունին:

ՆԱԲ ՆԱԽԻՋԵԻԱՆՅԻ

Երուսաղեմ

ներից կախում ըստ աշխատում ենք այդ ժրգրով» (ՊԻԱԿ Գ. առաջաբան, 1914, Ն. Երթ)։

Այդ թուականէն առկին գրական-գիտական առ «աշխատանքներ» վրայ աւելցուցած է Գ. Յովսէփեան

ա) — Կարողիկոսութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ,

բ) — Անքիլիասի Դպրեմանը,

գ) — Կազմակերպութիւնը հրատարակելի գործերուն։

Տուած եմ, նամակէ մը առնելով, մինչև 1952 տարին հասնող աշխատանքներու կարգացոյց մը, Մարգը գլուխին մէջ։

Այս ամենուն միտք բանի՞ն։

— Ան որ Գ. Յովսէփեան չարաչար կը վարուի իր հարստութեան հետ։

* * *

Պարտքը կը զգամ ընթերցողին մտքին մէջ նորոգելու իմ փորձին տարողութիւնը որ չի կրնար ծաւալիլ ընդգրկելու համար նայ մշակոյթին տիրական համայնապատկերը, ինծմէ, ինչպէս նիւթէն բխող պայմաններու իբրեւ հետեւանք։ Գրական վերլուծումը, երբ իր կալուածէն դուրս գետիններու վրայ կը փործուի, յաճախ բառ մատուցանելու մարզանք մը կը դառնայ, նոյնիսկ ամենէն հանգամանաւոր, «պատրաստուած» տեսարանի մը գրչին տակ։ Ծանօթ էք թերեւս հիմնական մէկ պահանջն որ գրական քննադատութիւնը կը տեսակաւորէ, զայն ենթարկելով փառքերու թափանցումին (այսինքն անոր մերժելով ինքնիրմով գոյ գեղազիւութեան մը օրէնքներէն ղեկավարում մը) կամ պատմութիւն ընելու պարտքին։ Այս տեսակէտէն քննադատը որ վէպ մը չէ կարող լատակերտել, պարկեշտ բան մը կ'ընէ... լռելով վէպի մը մասին։ Ու ասիկա այսպէս միւս սեռերուն ալ համար։ Ասոր զեղծանումը մենք կը հաստատենք հայ ճարտարապետութեան վրայ ծնունդ առած գրական լայն շահասիրութեամբ։ Այս տողերուն հեղինակը ոչ հնագէտ մըն է, ոչ բանասէր մը, ոչ ալ ճարտարապետ մը։ Գրականութեան պատմութեան իր դերը կը հաւատայ թէ կարող է միջին իր դերը կը հաւատայ Գ. Յովսէփեանին գործը առաւելագանց աստիճանով մը պատմա-գիտական, հնագիտական,

անոր մատչելի է ուրեմն իր այն մասերով որ կան գրական կենդանագիրներ, մեր ժողովուրդին համայնապատկերը թելադրող իրացումներ։

Երկրորդաբար կայ հայ մշակոյթի եւ արուեստի պատմութիւն ինքնին քիչ մը խոշոր տարազին տակ, այսօրուան մեր գտածին, դրածին նկարագիրը։ Այլէ անցուցէք Գ. Յովսէփեանի գործերուն ցուցակը։ Ձեր ուշադրութիւնը կը գրաւեն անուններ որոնք առաջին անգամ ըլլալով գրեթէ կը մատուցուին մեզի, տոհմերէ, գործերէ, անծերէ։ Յետոյ ուրիշ ալ նկատողութիւն։ — Այդ գործերը կերպընկալ արուեստի իրագործումներուն շարքին մէջ կը մտնեն։ Տաճար մը, ոգի, խորհուրդ, գեղեցկութիւն եւ յոյզ ըլլալէ առաջ նիւթեղէն մըն է, որոշ կերպարաններու հանդէս մը, ու իբր այս մեզ կը դնէ պարտքերու դիմաց։ Առնուազն, ընդարձակ աշխարհ մը կայ անոր ետին, ժամանակին մէջ հետզհետէ կերպափոխուող։ Այդ փազերուն իւրաքանչիւրին կը պատասխանէ մասնաւորուած զգալու դրութիւն մը, նոր բառով մը մշակոյթ մը։ Բայց տիրականը այդ դրութեանց մէջ պայմանաւոր է քարին վրայ գործադրուած աշխատանքով մը։ Ձեռագիր մը տաճար մըն է, աւելի պզտիկ չափի վրայ։ Մանրակար մը՝ աշխարհ մը։ Ու շարունակելով մտածումը կը գտնէք որ Սասանեան կերպասի կտոր մը, ոսկերչական արուեստէն առարկայ մը, կարասիներէն, սեֆորաքի իրագործումներէն իսկ նմոյշներ մշակոյթէ պահեր են, աւերակները կանգուն կամ կործան խաչքարերը, գերեզմանական կոթողները, բոլորը, իրենց կարգին, անշուշտ ունին արուեստին հետ յարաբերանք, միւս կողմէն ունենան զիւցազնալէպ մը, քնարական քերթուած գիւցազնալէպ մը, քնարական քերթուած մը, բերնէ բերան մեզի հասած մեղեդի մը, մը, բերնէ բերան մեզի հասած մեղեդի մը, քնարականներ, նկար մը այդ յարաբերանքը քննադատենք, նկար մը այդ յարաբերանքը կը հաստատենք աւելի յոտակ թելադրանքով (չեմ գործածք օրէնք բառը որ արներով (չեմ գործածք օրէնք բառը որ արներով մէջ բռնազօս բան մը կը ստեղծէ)։ ունենին մէջ բռնազօս բան մը կը ստեղծէ)։

Ահա թէ ուրկէ՞ իմ դժուարութիւնը.

— Այս ամէնը համադրելու, այս ամենէն հայ արուեստի եւ մշակոյթի հոլովոյթ մը մտաւտեսելու։ Աւելի՛ն։ Կրնայ ըլլալ որ վաթսուներէ աւելի տարիներ նման նիւթերու վրայ իր սիրտը պարպող, միտքը մարզող աշխատաւորը, Գ. Յովսէփեան, որեւէ երկ-

որդգէ մը աւելի ուժով մտատեսութեամբ մը ըլլայ ապրած այդ մշակոյթին հրապոյրը, հզօր ձգողութիւնը: Բայց այդ ամէնը, դուրսէն մարդու մը համար կը դառնայ մօայլ ճնշում մը: Մտքին ճիգը(*), անոնց մէջ նոյնութիւններ, կանոններու ուրուագիծ մը ճշդելու, կը վերածուի ամուլ ցաւի մը, ինչպէս կը զգանք երբեմն միջին անտառէ մը ներս, կամ՝ հերձափշուր մարմարաստանի դիմաց, կուշտին, անհեթեթին, խորապէս տգեղին ու անասնականին այնքան յայտարար տեսարանէ մը ձեր մէջ արթնցող արդար զգայութիւնները առաջնորդելու համար ուրիշներու որոնք մերն էին, են, այս անգամ այդ փայտէն ու այդ քարէն բխած բայց հանճարին միջամտութեամբը հսկայական յիշատակարաններու, շլացուցիչ ապարանքներու գեղագիտական խռովքին փոխակերպուած, հիմնովին մեր

(*) Սիրարփի Տէր Ներսէսեան, վենետիկի Միտիթարեան հայրերու ձեռագիրներէն խումբի մը վրայ (ԺԲ - ԺԴ, դարերու պատկանող) գործադրած է մեթոտի նմանող եղանակ մը ուսումնասիրութեան: Պատմել ձեռագրին կերպարանքը (թուղթ, գիր, կազմ, կողք յիշատակարաններ, մեծութիւն, կեանքը), մանրանկարներուն բովանդակութիւնը փոխադրել մեր օրերու թուղթին, այսինքն մանրանկարը նկարագրել, խօսիլ զարդէն, գրիէն, գոյնէն, ոգիէն: Այս ամէնը ի վերջոյ կը դառնայ յոգնութիւն եթէ ոչ տառապանք: Այս տառապանքը գինն է միութիւն, օրէնք, մշակոյթ տեսնելու եթէ ոչ փառասիրութեան, գէթ պարկեշտ յաւակնութեան մը: Արդ արուեստի մեծ ուղղութիւնները, գէթ մեր տեսածէն հետեւ ցնելով, ամենէն շատ երբեք սերունդի վրայ կը կերպարանեն իրենք զիրենք, ու կը փոխուին, ճիշդ կեանքին նման, երբեք հարիւր տարիներու վրայ, զանազան միջավայրերէ այդ հաւաքուններուն համար ճարել ուղղուած սանմանութիւնները, աւելի ճիշդ բառով մը հանգիտութիւնն է հեղինակը մեր մտքին սա առհանգստութեան: Գ. Յովսէփեան մանրանկարներ ուսումնասիրելու իր եղանակը տուած է պատմա-հնագիտական հառաջնորդութեան մէջ, իր յայտարարութիւնը, այս արարքը նկատելու փրկութեան արարք մը միայն, նիւթ՝ ապագայ արուեստի մը պատմութեան, կ'արժեքստ լայն պատրաստամտութեամբ մը: Անտիոյ իր գործը, յայ մանրանկարչութիւնը, անշուշտ ունի խօսելիք յաճախուող երեւոյթներէ: Սիրարփի Տ. Ներսէսեան 1947ին ուրիշ աշխատանքի մը մէջ (Համառոտ ուսումնասիրութիւն մը հայկական արուեստի եւ Բաղրամյապետի) սկիզբը կ'ընէ այդ մշակոյթի պատմութեան նախափորձերուն, իմ ձեռնհասութիւնը հոս ալ չի պաշտպաներ զիս:

միտքէն ու ջիղերէն փարատելով անտառներուն մռայլանքը եւ քարահանքին դեւատեսիլ ծամածռութիւնները, վայրագութիւնը:

Արուեստներու պատմիչին գերագոյն հեշտանքը պիտի ըլլար խորանալ Գ. Յովսէփեանով միջերուած նախանիւթէն ներս, ճշդել անոնց վրայ փորձուած աշխատանքին կշիռը: Տեղը եկած է յայտնելու որ այդ աշխատանքներէն ոմանք կատարուած են օտար լեզուներով (Գերմաներէն եւ Ռուսերէն) ու կը պատկանին բարձրորակ մասնագիտութեան մը, չափազանց յարգի, բանի որ պետութիւններու գիտական, պատմագիտական եւ հնագիտական հիմնարկներու պաշտպանութիւնը կը վայելն: Մատենագիր եւ հնախոյզ: Ինչու չէ, երբ գիտենք որ զիրքէն առաջ է գիրը, թուղթէն առաջ՝ քարը:

Բայց ունի՞ր գոյութիւն, «այսպէս ասած», պատմութիւն հայ արուեստի եւ մեակոյթի անունով կրթանք մը, իր փաստերը արթնեւորած, քաղաքացիութեան իրաւունքին տիրացած:

Թէ այս հարցումին, դժուար է պատասխանը, համակարծիք եմ ձեզի: Բայց կը փորձեմ հարցումը հայոց պատմութեան ալ վրայ: Ու պիտի գտնենք որ հոն ալ դեռ աշխատանքը չէ արդիւնաբերուած:

Նորութիւն,

— Հայ մեակոյթի պատմութիւնը:

Այնքան, որքան է թերեւս քիչիկ մը աւելիով, հայ ազգային, այսինքն քաղաքական պատմութիւնը:

Գաղտնիք չէ՞ որ հայոց պատմութիւնը խանձարուրի մէջ է տակաւին: Անցողակի խօսեցայ Խորհրդային Հայաստանի մէջ կատարուած նուաճումներէն (Մանանդեան, Աղոնց, նորագոյն դպրոցը որ հինքը շարունակելու արարքը չէ վերածած տրտմութեան, ինչպէս կը պատահի յաճախ մանաւանդ գրական գետնի վրայ ուր նորերուն առաջին փառասիրութիւնն է հինքը կործանել), պատմական ու լեզուաբանական, բանասիրական աշխատանքներու մէջ: Մեթոտի փոփոխութիւնն մը:

— Այնքան դարձեալ, որքան կարասիկա արեւելահայ բանասիրական դպրոցին ընդհանուր ուղղութեան մէջ:

1700էն առդին մեր մտաւորականու-

Արուեստը, սակայն, սա տողերուն վրայ,
ծեփծեփուն ու արհամարհելի մենաշնորհը
չէ կարգ մը իմաստի ճարտարապետներուն:
Չեմ ալ ակնարկէր անոր աղաւաղուած
միւս թելադրանքին որ զգալնտու թիւնը

անին :
Հայ մեակոթիքը : Օ'ն, անդր : Ու իր պատ-

մաքիւնը: Ու ասոնցմէ անդին հայ ստեղծագործ ոգուն համադրուեմը:

— Մի ամապարէք: Ձեզի ըսուած է որ Գ. Յովսէփեան առարկայօրէն գործող, հաստատ գետնի վրայ յառաջացող, առանց ապացոյցի — այսինքն նիւթեղէն վկայութեան — իրողութիւնները չընդունող աշխատաւոր մըն էր, այսինքն ամէն արկածախնդրութեան հանդէպ ինքզինքը պաշտպանել ուզող մէկը: Ուշագրաւ է որ տեսութեան, վարկածին, անդրիրական հետեւութիւններուն նշմարները չափազանց քիչ ըլլան իր կառոյցներուն մէջ: Գ. Յովսէփեան այս կերպ իմացական ախորժակներ երբեք չէ պարզած ոչ անշուշտ միայն անոր համար որ ինքզինքը գերմանական պատրաստութեամբ գիտուն մը կը դաւանի, այլ նիւթեղէնի անբաւ առատութենէն ալ հաւանաբար զգաստութեան կանչուած: Ինչ կարիք ենթադրութեան, երեւակայութեան, յերիւրանքի կամ նորոգ յօրինման նոյնիսկ, երբ համոզուած է որ իր նման տասը մարդոց ութսուն տարինքն իսկ քիչ կուզան մեր պապերուն մեզի ծգածը ցուցակագրելու: Կը հասկնա՞ք այս փաստը: Միւս կողմէն Գ. Յովսէփեան, իր մատներուն ապահովութեան չափովը, գիտէր հայոց պատմութեան — տպուած մասը, այսինքն մեր բոլոր մատենագիրներէն հրատարակուածը — ու ձեռագիր հայ մթերքին մէջ — ինք կը ճանչնայ զԵրեմ բոլոր հայ ձեռագիրները — երեւցած մեծ ու պզտիկ, մէկ անգամ միայն յիշուած բոլոր անունները: Կը մըտածեմ Ալիշանին, իր յիշողութիւնը մօտեցնելու համար կշիռի: Միսթարեան վարդապետը կը շարունակուի էջմիածնական վարդապետին մէջ, կրթանքներու ու կարողութեանց մերձաւոր հանգիստութեամբ մը: Գիտէ՞ք թէ հայագիտութեան, Գ. Յովսէփեանին տարագովը՝ հայրենագիտութեան մէջ աստիճանները տարբերացման որու ի նպաստ կը խօսին: Ահա թէ ինչու չեմ վարանիր ծանր յուզումով դիմաւորել Յովսէփեանի եւանդը որ վատնուած է այդ հայրենիքին գիտական գիտութեան, եթէ չէք նեղուիր բառէն: Հայոց զբաւոր արտայայտութիւնը չունի ատոր համար ոչ մէկ անայց կողմ, անկիւն նոյնիսկ: Ու հայոց աշխարհին ամենէն բանաստեղծական մէկ մասը անոր կողմէ ենթարկուած է

մանրամաղ, ամբողջական սպառիչ ուսումնասիրութեան մը, ամբողջութեամբ մը տրամադրելի միջոցներու, — մատ, ոտք, ալք, հոգի, գործիք (նկարելու): Անցեալին եւ ներկային սա մշտական փոխանցելիութիւնը, ուսումնասիրութեան մէջ հիմնական ծրագրին ներկայութիւնը փոխադարձ պաշտպանութիւն մը կ'ընծայեն: Այս պաշտպանութիւնը գիտութեան, փաստին, տօնի մէջին ապահովութեամբը միայն չերաշխաւորուիր: Անիկա մանաւանդ կը սնանի ներքին սրտառուի հուրքէն: Ալիշանի պատկառոտ հիացումը, Սրուանծտեանցի փրօժկուն տարփանքը այդ հայրենիքէն՝ Յովսէփեանին մէջ կը ստանան ցանկալի դաշնութիւն մը, ընտանութիւն մը, պարզ ու քաղցր հպարտութիւն մը, մեր օրերու մեր նահանջէն, սուգէն, կորուստներէն մեզ ազատագրել ձգտող: Յետոյ: Այսինքն յաւակնութիւնները՝ այս ամենուն վարդապետական, գեղագիտական, պատմա-իմաստասիրական զրահանքներ ճարելու, որպէս զի պատրանքներ ստեղծէ մտածողի, դիտարանի:

— Ոչ իսկ փշրանք մը:

Մեր պապերուն զովքն իսկ անիկա վերածած է հանդարտ, տրտում երախտագիտութեան մը: Ու մեծ բան է ասիկա: Մեր օրերուն, շատ քիչերու պիտի ներէինք սա յաւակնութիւնները, հայոց մշակոյթը եւրոպական տեսութիւններու մեթոտով համադրելու: Գ. Յովսէփեան, իր անհուն աշխատանքին գոհացած է տալով պարզագոյն տարազը

Նիւրեմ Կայ արուեստի եւ մօակոյթի պատմութեան, զմայելի համեստութեամբ մը, պէտք է կրկնել:

Շատ ու շատ՝ վիթխարի աշխատաւորը, սա պարկեշտութեան մղող պատճառները: Ձեմ բացուիր: Կը կենամ ամենէն կարեւորին առջեւ,

— Գ. Յովսէփեանին իմացական կագմութիւնը իրեն ծանրութեան կեդրոն ունէր, ունեցաւ գիտական, ամեն բան ճանչնալու, ամեն բան սորվելու իր ախորժակը որմէ եթէ չոր հաւաքիչ մը, ստերջ, ինքնաբաւ բանասէր մը չաճեցաւ մեր զխոսն, այս բարիքը շնորհն էր այդ միտքին միւս մասերուն, ասոնց յօրինուածութեան: Գիտէ՞նք մը: Անտարակոյս: Գրագէտ մը: — Ատոր

ալ կան վկայաթուղթերը որոնց կը մօտե-
նամ քիչ անդին :

Հիմա, ունեցէ՛ք սա ցուցակը, մեծածա-
ւալ անոր գործէն առնուած, ընտրովի,

1. — Սասմայ Մուր,
2. — Փերանգներ (ժողովրդական բանա-
հիւսութիւնից)
3. — Ռոսում — Զալ,
4. — Զագավանից ժողովը,
5. — Խոսրովիկ Թարգմանիչ,
6. — Ստեփանոս Սիւնեցու «ՄԵԿՆՈՒ-
ԹԻՒՆ ԶՈՐԻՅ ԱԻՆՏԱՐԱՆԻՅ» անտիպ :
7. — Մեծոփեցի, Օրմանեան, Նահա-

պետեան, Գաւիթ Հարադի եւ Պիտից գիրք,
Ս. Էջմիածնի պատկերագրութիւնը Սիմեոն
կարողիկոսի ժամանակ, պատմութիւն Յով-
նանու Մայրագոմեցու, Էջմիածնի մեծ խո-
րանի ասեղնագործ վարագոյրը, Սասանեան
կերպասի կտոր, Նիլիէ Թագեոսեանի երկու-
ցեքի ցուցահանդէս, Ագապի հաստատութիւնը
Հայոց եկեղեցւոյ մէջ, Հին հայոց դրամներ,
Հայկական ձեռագիրներու ցուցակին աւա-
սը (Ստրիկովսքի), այսինքն բոլոր կարեւոր
հանդէսներու մէջ լոյս տեսած գրութիւն-
ներէն ընտրուածներ որոնցմէ ոմանք այս
տարի հատոր կազմեցին 'Էկայի Լոյս եւ
Կեանք վերնագիրին տակ :

8. — Մխիթար Սասնեցի, Մխիթար Այ-
րիվանցի .

9. — Հայ մանրանկարչութեան լիակա-
սար փաթեկ (անտիպ),

10. — Հայ ձեռագրաց յիշատակարան-
ներ (հինգ հատոր, անտիպ)

11. — Նիւրեհ հայ մեակոյթի եւ ար-
ուեստի պատմութեան (եռահատոր)

12. — Խաչքականք (եռահատոր)

13. — Ազիզբէկեանք

14. — Զ. դարու հայ արուեստի լուսա-
բանութիւնը (Գ. պրակը՝ Նիւրեհ եւ ու-
սումնասիրութիւններ)

15. — Արագածի կասարին, կեանքիս ա-
մենեկն դժբախտ օրը,

16. — Հաւուց Թառի Ամենափրկիչը :

Ու հարցուցէ՛ք դուք ձեզ :

— Ո՞ւր է այս ամէնը իրարու ընծա-
յող միութեան զիծը :

Այս հարցականին բազմաթիւ են ազ-
դակները, հետեւանքները : Ամենէն առաջ
սա զանազանութիւնը արդար հեղինակ մըն
է քեզ կասկածի մղող : Կասկած՝ բանասէ-

րէն ու ասոր զուգորդ ամուլ հաւաքապա-
սէն : Կասկած՝ ամեն բանի հետամուտ որով՝
ծանձաղ շատարան մունեցիկէն : Կասկած
նոյնիսկ շառլաբանէն, չգիտցածէն խօսողէն,
նետող-բռնողէն :

Ուրախ եմ ու հպարտ ըսելու համար
որ ձեր կասկածները, թերեւս արդար, ձեր
ներսը, դառնագոյն փորձառութիւններով
գոյացած, անհարկի, անիմաստ են Գ. Յով-
սէփեանի գործին դիմաց որուն միակ մեղքը
թերեւս իր չափազանց նորութիւնն է, հը-
նազիտական, պատմագիտական, գեղար-
ուեստական գեղեցիկներու վրայ ու կար-
գացուիլը՝ տպաւորապաշտ էջերու վրայ :
Այսքան հմտութիւն ոչ մէկ տեղ կը վերած-
ուի բէտան հետաքրքրութեան, աւելորդ բա-
նալէճի, վարկածային փչողաբանութեան :

Կանխող գլուխին մէջ, ԽԱՂԵԱԿԵԱՆՔ,
Գ. Յովսէփեանի ամենէն խնամեալ ու ամ-
բողջական աշխատասիրութիւնը, ու իբր
այդ, առ այժմ իր գլուխ-գործոցը (բանի
որ լոյս տեսած գիրքերու փառք մը չեմ
կրնար ապառիկ չ'արձանագրել), փորձը
ըրած եմ Գ. Յովսէփեանի եթէ ոչ մեթոտը
վերլուծելու, գէթ թելադրելու այն տիրա-
կան զիծը որով կը յատկանշուին իր անունը
կրող բոլոր երկասիրութիւնները : Անհուն
բաւիղին մէջէն, Արիանի թելին նման անց-
նող միսքի ուղղութիւն մը որ մեր անհան-
գիստ, շուարուն հետաքրքրութիւնը կը
պաշտպանէ զառածուկ : Հարստութեան,
յորդութեան զգայութիւնները իրենց կար-
գին կը դառնան անվտանգ, բանի որ հոռետո-
րական, արկածախնդրական ոչ մէկ փա-
փաք հատորները կ'ուռնեն : Այնքան շատ,
այնքան տարբեր տարրերէ, այնքան հեռու
շրջաններէ կտոր կտոր փարուած սա խը-
ճանկարային (Mosaïque) արդիւնքը քաջա-
ւերիչ չէ անշուշտ, ոչ ալ նուաճող, ինչպէս
կ'ըլլան մեծ արուեստի որմանկարները, լիա-
ւոր նկարները : Բայց չի դադրիր դարէ մը,
ոգիւ մը խօսելէ, նոյնիսկ վկայելէ : Ման-
րանկար մը երբեմն, յուզիչ է, թելադրիչ է
լման պալատի թեւ մը ներկող նկարի ա-
տիման, մանաւանդ երբ առնէք նկատի ըն-
կալուչ մտքին տրամադրութիւնները : Այս
մէկը պիտի խանդավառուի խոշորով, պո-
ռոտով, մեծղիով : Ան միւսը՝ նուրբով, թե-
թեւով, վախով :

Վերի ցուցակով նուաճուած նիւթին,

ծգտուած ծգտումներուն, վատնուած սիրտին բաժինները առանձին առանձին վերլուծել

— կը նշանակէ հայ պատմութիւնը, արուեստը, հոգեբանութիւնը, ամբողջական զգայնութիւնը, միտքն ու սիրտը բերել ընկալածան լոյսին: Ինչ որ արեւելահայ Զարթօնքին մեծ գործաւորները նկրտեցան իրագործել, Գ. Յովսէփեան ընդունեց իբր հանգանակ ու... աւելցուց ԻԲԸ: Անոր պատկանածը դժբախտաբար յստակ կերպով չըրագծելի իրականութիւն մը է: Չէր կրնար ըլլալ: Բայց է թանկագին, թերեւս աւելիով իսկ, որքան մեծ այդ դպրոցին իրագործումները եղան դարու մը հասակով: Ես չունիմ ժամանակ, ու ձեռնհասութիւնն ալ, այդ աւելին բացատրելու համար կշիռի զարնելու ուրիշներէ կատարուածը: Ու ներեցէք ինծի որ մնամ զգոյշ, վերի ամփոփ ցուցակէն այն միութիւններուն վրայ ուր Գ. Յովսէփեան, իրմով առաջին անգամ սեւեռուած փշրանքներուն տեղեկարարն է դարձած, վատնելէ վերջ, որոնք գտնելու համար ծանր, սպաննող սպառում հայոց պատմութեան հնախօսութեան, կերպրեկալ արուեստի այնքան բազմազան, ընդարձակ հարցերը լուսաւորել ծգտող հարցերը: Ոչ ոքի մօտ, մեր բանասէրներէն՝ արուեստի նիւթերու շուրջ սա յուզիչ տազնապը: Համաձայն էք ինծի: Բայց դարձեալ ոչ ոքի մօտ, մեր բանասէրներէն տաքուկ, սրտամօտ հաւատաւորութիւն մը այդ արուեստին արժէքէն, մանաւանդ դերէն: Գերու-

թեան շրջանի բանուորներուն նկարագիրը կ'ըլլայ աւելորդ, նոյնիսկ խորանարդեալ հպարտութիւն: Գ. Յովսէփեան մեր նախնիքը գոհացնելու համար է՛ր որ ձեռնարկեց իր գործին (Ալիշան): Ոչ ալ Ռաֆֆիին նման ունէր աւելի արդիական, ծանր մտահոգութիւններ, մեր ներկայ տազնապանքը դիմաւորել ծգտող: Գիտուն մըն է՛ր, բայց ոչ աստեղային: Իւմանիստ մըն է՛ր, բայց ոչ անցելապաշտ: Գրագէտ մըն է՛ր, բայց ոչ սնապարծ փառասէր մը, կամ կատաղի մարգարէ, գալիքներով խենթեցած: Այս վերագրումները կը դադրին գրական այսինքն ճարուած ըլլալէ, երբ անդրադառնանք անոր օրերուն: Գտաք զայն, վաթսունէ աւելի տարիներու վրայ, եկեղեցականի իր կոչումին հաւատարիմ: Գտաք զայն հոն ուր ամենէն աւելի դժուար կ'երեւան մեր եկեղեցականները երբ մասնաւոր կիրքով մը չեն մղուած այդ տեղուանքը (Սրուանձտեանց): Ու կ'ունենանք տարօրինակը: Այսինքն գործը որ կը խօսի բարձրագոյն հետաքրքրութեանց ինչպէս նախնական հոգիներուն: Իրերանցիկ, անձնանալէ, խորանալէ աւելի լայնցող, ընդհանրացող սա եղանակին (գրելու) բարիքը թերեւս նուազ կիրքով մը գնահատուի մասնագիտացած գիտունէն կամ պատմիչէն, ու չհասնի միջին ընթերցողին որ առատութեան դիմաց շատ շուտ յոգնող արարած մըն է, մանաւանդ երբ այդ առատութիւնը նիւթեղէնին գետինէն կը ճարուի, գործօնութեան քիչ բաժինով մը:

Հեղինակին՝ «Արեւելահայ Բանասիրութիւնը եւ էջմիածին» գործէն:

Յ. ՕՇԱԿԱՆ

Այսօր ևս, երբ Լուսաւորչի հոգին մեր եկեղեցու վերապայծառութեան հրաւէր է կարգում, մենք ուրիշ ճանապարհ չունինք ընտրելու, բայց եթէ կրօնական, հոգեւոր վերածնութեան ճանապարհը: Ազգերի վերակենդանութեան ճշմարիտ ճանապարհը կրօնական վերակենդանութեան ճանապարհն է: Փրկչի խօսքը՝ «Եթէ ոչ ոք ձեցի վերստին, ոչ կարէ տեսնել զարթոյնութիւնն Աստուծոյ կարելի է և ազգերին ուղղել: Կրօնն է ճշմարիտ կեանքի աղբիւրը, ուրեմն և կրօնական վերածնութիւնը մի նոր և ճշմարիտ կեանքի սկիզբ: Մեր ներկայ կեանքը լի է վէրքերով: Մեր կեանքը լի է հիւանդ երեւոյթներով, որոնք իրենց կողմից ամենածանր հետեւանքներ են յառաջ բերում: Հոգեւոր են այդ վէրքերը, հոգեւոր զէնքերով էլ պէտք է զօքա ապաքինուին:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ